ԽՍՀՄ-Ի ՓԼՈՒԶՈՒՄԸ ԵՎ ՌԽՖՍՀ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄԸ (1990-1993 ԹԹ.)

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. Գ.

1990 թ. ՌԽՖՍՀ I համագումարի ընտրություններում, դեմոկարտները ստացան պատգամավորական տեղերի մեծամասնությունը[1]: Նրանց հիմնական կազմը բաղկացած էր կուսակցական նոմենկլատուրայից. նրանք իրենց այլևս խիստ կապված չէին զգում Կոմկուսի կենտկոմի հետ[2]: ՌԽՖՍՀ համագումարում առաջ եկան երեք հիմնական հոսանքներ՝ դեմոկրատներ ընդդեմ պարտոկրատների, դեմոկրատներ ընդդեմ ձախերի (կամ մասնավոր սեփականության կողմնակիցներ ընդդեմ հանրային սեփականության) և Խորհրդային Միության կողմնակիցներ ընդդեմ Ռուսաստանի:

ԳԽ նախագահ ընտրվեց Բ. Ելցինը: 1990 թ. հունիսի 12-ին համագումարն ընդունեց «Ռուսաստանի պետական ինքնավարության մասին հռչակագիրը», որը ՌԽՖՍՀ տարածքում կասեցնում էր ինքնավար պետության օրենքներին և սահմանադրությանը հակասող՝ ԽՍՀՄ իրավական ակտերը[3]: Արամատական դեմոկրատները չէին թաքցնում ԽՍՀՄ տնտեսական կայունացման ծրագրի նկատմամբ իրենց բացասական վերաբերմունքը: Նրանք շեշտը դնում էին առանձին տնտեսական ծրագրի ընդունման վրա: Այդ ուղղությամբ առաջին քայլերը կատարվեցին 1990 թ. նոյեմբերի 27-ին, ՌԽՖՍՀ II համագումարում: Բ. Ելցինի առաջադրած սոցիալ-տնտեսական ծրագիրը նախատեսում էր տնտեսական «վերակառուցման» քաղաքականություն: Ներկայացված լինելով իբրև ԽՍՀՄ տնտեսական կայունացման ծրագիր՝ այն տեղափոխվեց ՌՍՖՍՀ-ն ԳԽ համագումար և ներկայացվեց իբրև ՌԽՖՍՀ-ի տնտեսական վերափոխման ծրագիր[4]: Այն դարձավ հակակշիռ միութենական ծրագրին՝ տնտեսական հրաշք խոստանալով հասարակությանը[5]:

1991 թ. մարտին ՌԽՖՍՀ III համագումարն ավելի սրեց իրավիճակը՝ լրացուցիչ լիազորություններ ընձեռելով Բ. Ելցինին[6]: Արմատական ընդդիմության պահանջները տնտեսականից աստիճանաբար տեղափոխվեցին քաղաքական հարթություն[7]: Արդեն 1990 թ. մարտի 17-ին ԽՍՀՄ-ի պահպանման հարցի

---

[1] **Гайдар Е. Т.** *Дни поражений и побед, М.,1996, с. 232.*

[2] **Обухов С. П.** *Российский парламентаризм между признанием и отторжением. Проблема массового восприятия (1989-2005 гг.), М., 2005, с. 87.*

[3] *Известия, 13. VI. 1990.*

[4] **Рыжков Н. И.** *Главный свидетель, М., 2009, с. 119-121.*

[5] **Обухов С. П.,** *նշվ. աշխ., էջ 95:*

[6] *Отечественная история России новейшего времени 1985-2003 гг., отв. ред. А. Б. Безбородов,М., 2003, с. 224.*

[7] **Никонов А. А.** *Спираль многовековой драмы: аграрная наука и политика России (XVIII-XX вв.), М.,1995, с. 420.*

հանրաքվեին զուգահեռ ՌԽՖՍՀ-ի քաղաքացիները կողմ արտահայտվեցին ՌԽՖՍՀ-ում նախագահի պաշտոնի ստեղծմանը[8]: 1991 թ. մայիսին ՌԽՖՍՀ համագումարը որոշում կայացրեց ՌԽՖՍՀ-ում նախագահական ընտրությունների անցկացման մասին: 1991 թ. հունիսի 12-ին՝ ՌԽՖՍՀ նախագահական առաջին ընտրություններում, հաղթանակ տարավ Բ. Ելցինը՝ 75.3% արդյունքով:

1991 թ. երկրորդ կեսին ԽՍՀՄ-ում սկսվեցին ինքնավարության շքերթները: Խորհրդային հանրապետությունների վերնախավերը շատ լավ գնահատել էին ազգային հարցի հավաքական ռեսուրսը՝ իբրև հզոր զենք կենտրոնի դեմ պայքարում[9]: Մ. Գորբաչովը ԽՍՀՄ տարածքում ծագած խնդիրներն առաջարկեց լուծել 1991 թ. ապրիլի 23-ին հայտարարված «9+1» պայմանագրով[10]: Քննարկումները կայացան Նովո Օգարևում: 15 հանրապետություններից միայն 8-ն էին համաձայն Միության պայմաններին[11]: Անորոշ էր Միության մեջ չմտած հանրապետությունների հարցը[12]: (Լիտվան, Լատվիան, Էստոնիան, Մոլդովան, Վրաստանը և Հայաստանը հրաժարվել էին հանդիպումից)[13]: Պայմանագիրն իր կառուցվածքով հիշեցնում էր ոչ թե կոնֆեդերացիա այլ, պետությունների ակումբ[14]: 1991 թ. հուլիսի 3-ին Բ. Ելցինի և Մ. Գորբաչովի միջև տեղի ունեցած հանդիպման ընթացքում նախնական համաձայնություն ձեռք բերվեց միութենական նոր փաստաթղթի վերաբերյալ: Բ. Ելցինը պահանջել էր առավել չեզոքություն հանրապետությունների հետ հարաբերություններում[15]: ԽՍՀՄ կառավարությունում լուրջ փոփոխություններ էին նախատեսվում օգոստոսի 20-ից հետո: 1991 թ. օգոստոսի 19-ի առավոտյան, հեռուստատեսությամբ, ողջ երկիրը ԽՍՀՄ կառավարության կողմից տեղեկացավ Հատուկ դրության պետական կոմիտեի (ԳԿՊ- ի) ստեղծման մասին[16]: Այն ընդգրկում էր քաղբյուրոյի պահպանողական հատվածը՝ փոխնախագահ Գ. Յանան, վարչապետ Վ. Պավլով, ՆԳՆ նախարար Բ. Պուգո, ՊԱԿ-ի պետ Վ. Կրյուչկով, ՊՆ նախարար Դ. Յազով: Օգոստոսի 19-20-ին Սպիտակ տան բոլոր մատույցները շրջափակվեցին բարիկադներով: ՌԽՖՍՀ-ի նախագահ Բ. Ելցինի կոչով հազարավոր մարդիկ ելան պաշտպանելու Սպիտակ տունը[17]: ՀԴՊԿ-ի անդամները չունեին քիչ թե

---

[8] **Баглай М. В.** *Конституционное право Российской Федерации, М., 2007, с. 454.*

[9] **Барсенков А. С.** *Введение в современную российскую историю 1985-1991 гг, М., 2002, с. 123.*

[10] **Шейнис В. Л.** *Взлет и падение парламента: переломные годы в российской политике (1985-1993), т. 1, М., 2005, 473.*

[11] *История России XX - начала XXI века., под. ред. Л. В. Милова, М., 2006, с. 816.*

[12] **Шейнис В. Л.,** *նշվ.աշխ., էջ 488:*

[13] **Поцелуев В. А.** *История России XX столетия, М., 1997, с. 464.*

[14] **Барсенков А. С.,** *նշվ.աշխ., էջ 207:*

[15] *Коммерсантъ. Власть, 1991, N 27 (71), с.1.*

[16] **Поцелуев В. А.,** *նշվ.աշխ., էջ 476:*

[17] **Кириллов В. В.** *История России, М., 2007, с. 624-625.*

շատ մշակված գործողությունների ծրագիր[18]: 1991 թ. օգոստոսի 21-ին Սպիտակ տան պաշտպանները բանակային ստորաբաժանումներից մեկի հետ բախման ժամանակ երեք զոհ տվեցին: Միջադեպից հետո բանակը դուրս բերվեց Մոսկվայից: Փոխնախագահ Ալ. Ռուցկոյը կազմակերպեց Ֆարոսում մեկուսացած ԽՍՀՄ նախագահի վերադարձը[19]: «Հեղաշրջման» ձախողումից հետո Բ. Ելցինը 1991 թ. օգոստոսի 23-ին հրամանագրով դադարեցրեց Կոմկուսի գործունեությունը, իսկ դրա իրավունքն ուներ միայն դատարանը: Օգոստոսի 24-ին ՌԽՖՍՀ համագումարում Բ. Ելցինի ճնշման տակ Մ. Գորբաչովը հայտարարեց Կոմկուսի կենտկոմի լուծարման մասին[20]: Սրանով Բ. Ելցինը հեռացրեց իր գլխավոր խոչընդոտը՝ Կոմկուսը: Նա ձերբազատվեց նաև միութենական պայմանագրի շուրջ իր պարտավորությունից:

Դեռ, 9+1 պայմանագրի բանակցությունների ընթացքում քննարկումների գլխավոր թեման կենտրոնի դերակատարման հարցն էր: ՌԽՖՍՀ-ն ուներ երկու ճանապարհ՝ կենտրոնի վրա հաստատել իր որոշիչ ազդեցությունը կամ դուրս գալ Միությունից՝ օբյեկտիվորեն դառնալով ձգողության նոր կենտրոն[21]:

Երեք պետությունների (Ռուսաստան, Բելոռուս, Ուկրաինա) ղեկավարների կողմից 1991 թ. դեկտեմբերի 8-ին Բելովեժում ստորագրված համաձայնագրով ԽՍՀՄ-ը փոխարինվեց ԱՊՀ-ով[22]: 1991 թ. դեկտեմբերի 21-ին Ալմա-Աթայում ընդունվեց միութենական հանրապետությունների համատեղ որոշումը, որով ԽՍՀՄ-ը դադարում էր գոյություն ունենալուց[23]: Ստեղծված պայմաններում 1991 թ. դեկտեմբերի 25-ին Մ. Գորբաչյովը հրաժարական տվեց ԽՍՀՄ նախագահի պաշտոնից և դրանով եզրափակեց «վերակառուցման» շրջանը[24]:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ՌԽՖՍՀ-ը դարձավ նրա իրավահաջորդը՝ ինքնաբերաբար ժառանգելով ճգնաժամային բոլոր գործընթացները: Ինքնավարության հռչակումից հետո նոր իշխանությունը չկարողացավ հաստատել օրենքի գերակայությունը: Բ. Ելցինի և նոր վերափոխողների սխալն այն էր, որ նրանք ակնկալում էին սոցիալ-տնտեսական խնդիրները լուծել կարճ ժամկետում[25]: Բ. Ելցինի կողմնակիցները դեռ 1990 թ. ընտրությունների նախօրյակին իրենց ընդդիմախոսներին համոզում էին, որ նա՝ իբրև առաջնորդ անհրաժեշտ կլինի ընդամենը 1.5-տարի, ոչ ավել[26]:

---

[18] **Рыжков Н. И.,** *նշվ. աշխ., էջ 146:*
[19] **Поцелуев В. А.,** *նշվ. աշխ., էջ 478:*
[20] **Рыжков Н. И.,** *նշվ. աշխ., էջ 147-149:*
[21] **Шейнис В. Л.,** *նշվ. աշխ., էջ 489:*
[22] **Пихоя Р. Г.** *Советский союз: история власти. 1945-1991, М.,1998, с. 710-711.*
[23] **Поцелуев В. А.,** *նշվ. աշխ., էջ 482:*
[24] **Грачев А. С.** *Кремлевская хроника, М., 1994, с. 400-414.*
[25] **Шейнис В. Л.,** *նշվ. աշխ., հ. 2, Մ., 2005, էջ 251:*
[26] **Обухов С. П.,** *նշվ. աշխ, էջ 88:*

1991 թ. Բ. Ելցինը ուներ լրացուցիչ լիազորությունները, որոնք հաստատել էր ՌՍԽՍՀ III համագումարը[27]: Ի լրումն դրա՝ Բելովեժի փաստաթուղթը իրավական տեսանկյունից թերի էր: Երեք ղեկավարներից ոչ մեկը լիազորություններ չուներ նման որոշումների համար: Իրենց որոշումները Բելովեժում պետք է հաստատեին ՌԽՖՍՀ ԳԽ-ն և համագումարը, որոնք էլ հեշտությամբ վավերացրեցին համաձայնագիրը[28]:

1991 թ. հունիսի 22-ին ՌԽՖՍՀ I համագումարն ընդունել էր «Սահմանադրական հանձնաժողով» ստեղծելու մասին որոշումը[29]: Այն պետք է ձեռնամուխ լիներ սահմանադրության փոփոխությանը: 1978 թ. փոփոխված սահմանադրությունը չէր համապատասխանում ժամանակի ոգուն: Առաջին փուլում խոսքն ընդհանուր դրրույթների մասին էր: 1991-1992 թթ. պետական կառուցվածքի մասին խնդիրը ավելի սուր դրվեց[30]: 1992 թ. մարտի 30-ին ՌԴ նախագահի և դաշնության սուբյեկտների ղեկավարների մասնակցությամբ ստորագրվեց Դաշնային պայմանագիրը: Նրանում ամրագրրվում էր Կենտրոնի և սուբյեկտների իրավասությունների սահմանը, սակայն խնդիրների լուծման հիմք էր հայտարարվում Սահմանադրությունը[31]: Համագումարը հաստատեց փաստաթուղթը 1992 թ. ապրիլի 10-ին[32]:

1992 թ. ապրիլի 21-ին Ժող. պատգամավորների VII համագումարը որոշում ընդունեց «Սահմանադրական կարգի պաշտպանության մասին»[33]: 1992 թ. դեկտեմբերին սկսեցին ուրվագծվել նախագահի և ԳԽ-ի, Համագումարի միջև առաջին առճակատման սցենարները: Դեկտեմբերին ՌԴ համագումարը նախագահին զրկեց լրացուցիչ լիազորություններից[34]: Ի պատասխան՝ Բ. Ելցինը ելույթ ունեցավ դեկտեմբերի 12-ին և առաջարկեց վստահության հանրաքվե անցկացնել:

1993 թ. մարտի 20-ին առաջին փորձը կատարվեց «Երկրի կառավարման հատուկ կարգ» մտցնելու ուղղությամբ[35]: Փորձը ձախողվեց: Սահմանադրական դատարանը մարտի 23-ին այն ճանաչեց հակասահմանադրական[36]: 1993 թ. մարտի 26-ին գումարված IX արտահերթ համագումարը հանդես եկավ նախագահին պաշտոնանկ անելու նախաձեռնությամբ: 30 ձայնի բացակայության պատճառով որոշումը

---

[27] Политические партии России в контексте ее истории, под ред. С. Смагина, Ростов -на-Дону, 1998, с. 400.

[28] Обухов С. П., նշվ. աշխ., էջ 157:

[29] Баглай М. В., նշվ. աշխ., էջ104:

[30] Шейнис В. Л., նշվ. աշխ., հ. 2, էջ 329-330, 336-337:

[31] Известия, 30.V.1993.

[32] Из истории создания Конституции Российской Федерации, т.3, под ред. О.Г. Румянцева, М., 2008, с. 785.

[33] Шейнис В. Л., նշվ. աշխ., հ. 2, էջ 339:

[34] Обухов С. П., նշվ. աշխ., էջ 182:

[35] Նույն տեղում, էջ 272:

[36] Шейнис В. Л., նշվ. աշխ., հ. 2, էջ 260:

չհաստատվեց[37]: Նախագահը առաջարկեց վստահության հանրաքվե անցկացնել[38]: Երկրի ներքին սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը Կրեմլին վստահություն չէր ներշնչում քայլերի հասարակական արձագանքի հարցում[39]:

Հանրաքվեն կայացավ 1993 թ. ապրիլի 25-ին: Հանրաքվեի դրված հարցերը շարունակում էին բևեռացված պահել հասարակությանը, քանի որ պահպանում էին երկու կողմերի իրավունքները: Այն հաստատեց ԳԽ-ի նոր ընտրությունների անհրաժեշտությունը, սակայն դրանց անցկացումը Կրեմլի համար անվերապահորեն անբարենպաստ արդյունք էր խոստանում: Բոլորն էլ միակարծիք էին այն հարցում, որ ընտրությունները պետք է տեղի ունենան նոր սահմանադրության ընդունումից հետո[40]: Սակայն առկախ էր գլխավոր հարցը՝ Սահմանադրությունը[41]:

ԹԵ ՌԴ-ի ինքնավարության մասին հռչակագիրը, թե՛ դաշնային պայմանագիրը արձանագրում էին պետության կառավարման ժողովրդավարական, իրավական սկզբունքները, մարդու և քաղաքացու իրավունքները, բայց դրանցում չէին որոշակիացվում ՌԴ-ի պետական կարգն ու կառուցվածքը. հարցի կարգավորումը հղվում էր սահմանադրությանը[42]: Առանց նոր սահմանադրության և ընտրական օրենքի՝ ընտրությունների անկացմանը դեմ էր և ԳԽ-ի կառուցողական հատվածը՝ հանձինս ԳԽ-ի փոխխոսնակ Ն. Ռյաբովի, Ռ. Աբդուլատիպովի, Յու. Յուրովի, Օ. Ռումյանցևի[43]:

Ընտրություններից առաջ պետք էր ընդունել նոր սահմանա-դրություն: Սակայն մշակված՝ 3/4 նախագահական նախագիծը ձեռնբտու չէր ո՛չ Կրեմլին, ո՛չ էլ ԳԽ-ին: Այն ոչ մեկին պետք չէր: Այնուհանդերձ, հանրաքվեի արդյունքները գործողությունների հիմնավորման տեսակետից ոչ մի բան չէին տալիս Բ. Ելցինին: Խոսքը մասնավորապես վերաբերում էր ԳԽ-ն և համագումարը ցրելուն[44]: Եվ սահմանադրության ընդունման հարցը նորից հայտնվեց կիզակետում: 1993 թ. ապրիլի 15-ին, մինչև հանրաքվեն, հայտարարվում է ՌԴ-ի նոր սահմանադրության նախագծի մասին: Այստեղ որպես հիմք ընդունվեց ոչ թե 3/4 նախագահական նախագիծը, այլ ստեղծվեցին երկու առանձին աշխատանքային խմբեր՝ Ս. Շախրայի և Ս. Ալեքսեևի ղեկավարությամբ[45]: 1993 թ. մայիսի 20-ին նախագահը Բ. Ելցինը հայտարարեց «Սահմանադրական խորհրդակցության» և Սահմանադրության

---

[37] Отечественная история России новейшого времени 1985-2003 гг., ¿з 410:

[38] Баглай М. В., նշվ. աշխ., էջ 104:

[39] Шейнис В. Л., նշվ. աշխ., հ. 2, էջ 301:

[40] Гранкин И. В, Парламент России, М, 2001, с. 38-41.

[41] Отечественная история России новейшего времени 1985-2003 гг., ¿з 411:

[42] Ведомости Съезда народных депутатов РСФСР и Верховного Совета РСФСР, 1990, N 2, с. 22.

[43] Известия, 19.V.1993.

[44] Նույն տեղում, 10.IV.1993:

[45] Шейнис В. Л., նշվ. աշխ., հ. 2, էջ 339-340:

նախագծի ավարտման աշխատանքները սկսելու մասին[46]: Բ. Ելցինը այդպես էլ մինչև վերջ չպարզաբանեց իր հրավիրած քննարկման կարգավիճակը՝ սահմանադրական խորհրդակցությո՞ւն, թե՞ սահմանադրական ժողով[47]: Սա կասկածելի էր, եթե հաշվի առնենք ներկայացվող Սահմանադրական հանձնաժողովի անդամների, ԳԽ-ի խմբակցության անդամների կարգավիճակը, ընդամենը՝ իբրև ներկայացուցիչ: Այս օրգանի թե՛ կարգավիճակը, թե՛ ձևավորման սկզբունքները այդպես էլ մնացին անորոշ: «Սահմանադրական խորհրդակցություն» հրավիրելով՝ Բ. Ելցինը ցանկանում էր ՌԴ-ն Սահմանադրության նախագծի խնդրում անցում կատարել 3/4 նախագահականից գերնախագահականի, ինչի համար էլ խորհրդակցության էին հրավիրվել հիմնականում գործադիր իշխանության ներկայացուցիչներն ու Դաշնության սուբյեկտների լիազոր ներկայացուցիչները: Բնական էր, որ վերջիններս ավելի հակված կլինեին թույլ պառլամենտի և սուբյեկտների լայն լիազորությունները չսահմանափակող սահմանադրությանը: 3/4 նախագահական նախագիծը սուբյեկտների հարաբերությունները Պայմանագրային դաշնությունից տեղափոխում էր Սահմանադրական դաշնության հարթություն և նրանց զրկում լայն ինքնավարությունից: Ռ. Խասբուլատովը փորձեց հենց խորհրդակցության բացման օրը՝ հունիսի 5-ին, Կրեմլի դահլիճում տապալել աշխատանքները[48]:

1993 թ. հուլիսի 12-ին նախագահական սահմանադրության նախագիծն արդեն պատրաստ էր[49]: Սահմանադրությունը պետք է անցներ համագումարով: Դա իրատեսական չէր[50]: Սահմանադրության ընդունման ճակատագիրը մնում էր անորոշ: ԳԽ-ն ամեն կերպ ձգձգում էր սահմանադրության իր նախագծի ընդունումը[51]: Այս պայմաններում 1993 թ. սեպտեմբերի 21-ին Բ. Ելցինը հայտարարեց «ՌԴ-ում փուլային սահմանադրական վերափոխման մասին»: Շուրջ 3 շաբաթ տևած միջնորդական առաքելությունները ոչինչ չտվեցին, իսկ հոկտեմբերի 3-ին սկսված արյունոտ բախումները եզրափակվեցին հոկտեմբերի 4-ին՝ Սպիտակ տան հրետակոծությամբ:

1993 թ. հոկտեմբերի 7-ին Ս. Զորկինը Կրեմլի ճնշման տակ հրաժարական տվեց, որից հետո նախագահը ստորագրեց «Սահմանադրական դատարանի լուծարման մասին» հրամանագիրը այն հիմնավորելով դրա ոչ լիարժեք կազմով[52]:

Հոկտեմբերի 9-ին նախագահը ստորագրեց «ՌԴ-ում սահմանադրական փուլային վերափոխման ժամանակաշրջանում կարգ ու կանոնի ապահովման պայմանների մասին» հրամանագիրը[53]: Այսպես ավարտվեց Ժողովրդական պատգամավորների

---

[46] Известия, 22. V. 1993.

[47] **Шейнис В. Л.,** նշվ. աշխ., հ. 2, էջ 324:

[48] Известия, 8.V.1993.

[49] **Баглай М. В,** նշվ. աշխ., էջ 108:

[50] **Шейнис В. Л.,** նշվ. աշխ., հ. 2, էջ 367:

[51] Из истории создания Конституции Российской Федерации, с. 34.

[52] **Островский А. В.** Расстрел “Белого Дома”, М., 2008, с. 481.

[53] Известия, 15.X.1993.

համագումարի և ԳԽ-ի ժամանակաշրջանը: Սակայն, հայտնի է, որ ազատություն ստացած ժողովուրդը, որ սովոր է եղել ապրել անհատների բռնի իշխանության պայմաններում, որպես կանոն՝ շատ արագ կորցնում է այն[54]*:*

Գնահատելով ստեղծված ճգնաժամի վերջին փուլը՝ պետք է ընդունել, որ 1992 թ. սկսած՝ սահմանադրության և քաղաքական համակարգի, պետական կարգի հարցերում արդեն բանավեճը մտավորականության և իշխանության ղեկին գտնվող պաշտոնյաների շրջանակում էր: Այն երկիշխանության վտանգավոր իրավիճակ էր ստեղծել ՌԴ-ում, որն արդեն սպառնում էր երկրի միասնությանը: Ցավոք, կողմերի կոշտ դիրքորոշման պայմաններում ճգնաժամը հանգուցալուծվեց միայն նրանցից մեկի ջախջախմամբ:

РАСПАД СССР И КРИЗИС ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЫ РСФСР (1990-1993 ГГ.)

ГРИГОРЯН А. Г.

Резюме

После распада СССР политическая элита РФ оказалась в качественно иной общественно-политической среде, где в силу объективных причин неприемлемы были мышление и морально-этические нормы старой политической системы.

РФ унаследовала от “перестройки” деформированное общественное мышление и накопленные нерешенные социально-экономические проблемы. В подобной ситуации интеллигенция попыталась конституционным путем осуществить реформу политической системы РФ. Однако конфронтация между законодательной и исполнительной властью вначале переросла в гонку за сохранение имевшихся полномочий, а затем вышла за рамки правового поля, став одной из причин создания авторитарной политической системы в РФ.

[54] **Макиавелли Н.** *Государь, М., 2000, с. 196.*